

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՓՐԿԶԻ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(16 Ապրիլ 1995 թ.)

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՇՈՒՆՉԸ ՄԵՐ ԵՐԿՐՈՒՄ

«Այսօր և մեք զուարճացեալք
պայծառասցուք տօնիւս.
Ընդ հաշտութեանն Աստուծոյ
Միմեանց արկցուք գիրկս սիրով
Եւ միաբան գոչեսցուք.
Քրիստոս յարեաւ ի մեռելոց».

(Շարական)

Ի՜նչ խորիմաստ և յանկուցիչ պատկեր է շարականագիր հայ վարդապետին այս գեղանկարային բնորոշումը Հարութեան տօնին նշանակութեան և մեր կեանքի մէջ առաջացուցած հոգեկան վիճակին: Զատկի տօնին ներգործութեամբը մենք պայծառանում ենք և գերազանցօրէն երջանկանում: Միմեանց հետ ողջագուրում ենք սիրալիր հոգով, իրար աչքերի մէջ ենք նայում, նրանց մէջ ժպիտ ենք տեսնում որպէս բերկրանքի ճառագայթում, իրար ձեռքերն ենք սեղմում քրիստոնէական հաւատի և համերաշխութեան զգացումների զօրութեամբը, և միաձայն գոչելիս ասում ենք միմեանց.

«Քրիստոս յարեա՜ւ ի մեռելոց».

Ես չեմ կարող պատկերացնել ուրիշ աւելի հարազատ եղանակ ողջունելու համար Յարութեան աւետիսը մեր կեանքում: Որովհետև Քրիստոսի յարութեան դէպքի պանծացումը տալիս է մեզ այն մեծ գաղափարը որ Քրիստոս յաղթել է մահուան, որը մարդկանց համար նկատում էր մեծագոյն չարիքը: Քրիստոս մեր առաջ բացում է յաւիտենական կեանքի ճանա-

պարհը: Իր յարութեամբը մեզ ներշնչում է այն հաւատքը թէ՝ կեանքը գերեզմանով վերջ չի գտնի, թէ՝ հոգևոր կեանքը նիւթական գոյութեան օրինաչափութիւններից վեր է մնում: Ոյժ է տալիս մեզ կեանքն ապրելու անմահութեան յոյսի զօրութեամբը: Այլապէս կեանքն ապրել մի օր մեռնելու և փճանալու համար՝ դա անիմաստ գոյութեան կը վերածի մեր ապրելու ընթացքը:

Թէ Քրիստոս ինչպէս յարութիւն առաւ, մարդկանցից ոչ ոք չէ կարող հասկանալ և բացատրել: Նոյնիսկ Յիսուսի առաքեալները և ամբողջ սրտով և հոգով Նրան առաջին հաւատացողները չէին կարողացել ըմբռնել թափուր գերեզմանը...: Բայց տեսան իրենց Տէրը յարուցեալ: Զգացին Նրա մշտակենդան և յաւիտենական ներկայութիւնը իրենց մէջ: Յարութեան իրականութիւնն ու զօրութիւնը ներթափանցեց նրանց գոյութեանը և ողջ կեանքին մէջ և հոգեկան արիութեամբ զինեց նրանց: Երէկուայ երկչոտ առաքեալները, Յիսուսից խոյս տուող, նոյնիսկ Նրան ուրացող աշակերտները կերպարանափոխուեցին, հոգեկան մի աննկարագրելի զօրութիւն ստացան, դարձան անվախ, համարձակախօս, մահն իսկ արհամարհելու աստիճան:

Յիսուսի հետևողները ուրիշ ի՞նչ ոյժ ունէին Քրիստոսի հաւատը կարենալ տարածելու համար: Ոչ գահ ունէին և ոչ մական, ոչ զէնք և ոչ բանակ, ոչ գիտութիւն և ոչ հեղինակութիւն, միայն և միայն իրենց հաւատքը յարութեան վրայ: Իրենց վարդապետը յաղթել էր մահուան. իրենք այլևս չէին վախենում ո՛չ սրից և ո՛չ նիզակից, ո՛չ կայսրից և ո՛չ հռոմէական կրկէսների գազաններից: Յարութեան հաւատքի անդիմադրելի ոյժով նրանք կարողացան Պաղեստինում ծագում առած քրիստոնէական կրօնը տարածել ողջ աշխարհում և բոլոր ազգերին՝ առանց գոյնի խտրութեան:

* * *

Այդ հաւատքի առաջին օրրաններից մէկը հանդիսացաւ մեր Հայաստան աշխարհը: Յարութեան գաղափարը միախառնուեց մեր ժողովրդի համոզումներին և ապրումներին, շաղախեց մեր բարոյական ուժականութիւնը և դարբնեց մեր տոկունութիւնը:

Մահը ինք իրեն կարծեց մօտիկ հայ ժողովրդին. քանի-քանի՜ անգամներ համատարած տարողութեամբ նա փորձեց մանգաղել մեզ և մեր Հայկեան տունը, մայր հայրենիքը վերածել գերեզմանատան...: Բայց յարութեան յոյսով լիցքաւորուած մեր ժողովրդի զաւակները խափանեցին մահը իրենց ստեղծագործական կեանքի յաւիտենական զօրութեամբը, և կարծես միանալով Պօղոս Առաքեալին ասացին. «Ո՞ւր է մահ յաղթութիւն քո»: Այո՛, Հայաստանը անթիւ մահեր տուեց, բայց ինք մահ չտեսաւ, որովհետև հայ ժողովուրդը իր ողջ գոյութեամբը հաւատաց Յարութեան»: Նա հաւատաց որ Յիսուս «մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»: Նա հաւատաց և իր կարգին ինքն էլ ասաց «Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է»:

Ահա թէ ի՛նչ պատճառով ես այնպէս եմ զգում որ մենք՝ հայերս՝ իրաւունք ունենք անփոխարինելի և անգերազանցելի բերկրանքով ողջունելու Քրիստոսի Յարութեան տօնը: Մենք մեր հայրենի հողի վրայ, և ահա շուրջ

Զատկական պատարագի հանդիսավոր թափոր

Հոգեհանգստյան արարողություն Ծիծեռնակաբերդում



Վեհափառ Հայրապետը Շուշիական Բարոյի տպարանում



Վեհափառ Հայրապետը ընդունում է Մինսկի
եւ Բելոռուսի միտրոպոլիտ Ֆիլարետին

երկու հազարամեակներ տևողութեամբ, ապրել ենք և ապրում ենք յարութեան հրաշքը: Եթէ հաշտուած լինէինք մահուան գաղափարին հետ՝ վաղուց դադարած կը լինէինք կեանքից և մեր երկիրը վերածուած կը լինէր խաչքարերի երկրի, և մեր գոյութիւնը վերածուած կը լինէր յուշարձանային մեռելութեան...:

Ներկայ դարի սկզբին, 1915 թուի Ապրիլեան ահաւորագոյն եղեռնը եկաւ և աւելի քան մէկ և կէս միլիոն հայեր հնձեց ու տարաւ և հողի վերածեց, մեր սեփական հողերից մեզ դուրս պոկեց և աշխարհով մէկ ցրիւ տուեց: 80 տարիներ ետք մենք ահա կանգնել ենք ողջ աշխարհին դիմաց և ասում ենք.

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց
Յարեաւ և ազգն Հայոց
Փառք Յարութեան քո Տէր»:

Յարութեան շունչը ուժեղ ներգործութեամբ մեզ վերստին այցելեց այս վերջին տարիներին և մենք «նորափետուր զարդարեալ» վերստին սկսեցինք ազատութեան շնչով ապրել մեր կեանքը անկախ Հայաստանի Հանրապետութեան գոյաւորումով և օրից օր զօրացումով:

Մի՛ մոռանաք, որ Յարութեան տօնը ծիսականօրէն կը համընկնի այն տօնին որ եբրայեցի ժողովուրդը կը կոչէր պասքա (պասեք) և որով նրանք կը նշէին իրենց ազատագրումը գերութիւնից, իրենց անցքը գերութեան երկրից դէպի աւետեաց երկիրը: Քրիստոնէական ըմբռնողութեամբ՝ Յիսուսի յարութիւնը ազատագրումն է մարդ էակին մեղքի և մահուան գերութիւնից: Մեր մարդկային ազատութիւնը և ազգային իրաւունքը կաշկանդող ոյժից դուրս եկանք և մեր աւետեաց երկրում սկսեցինք վերստին մեր սեփական շնչառութեան կշռոյթովը ապրել:

Ինձ համար մանաւանդ բերկրանքի բացառիկ և աննախընթաց օր է այս օրը, որովհետև առաջին անգամ է որ ես իմ կեանքում Զատիկ եմ տօնում իմ ազատ, անկախ հայրենիքում, իմ հայրենաբնակ ժողովրդի հետ, Յարութեան ձայնին արձագանք եմ տալիս Յարութեան հայկազեան այս «անլռելի զանգակատնից», որի հիմքը դրեց յարուցեալ Փրկիչը Ինք Իր էջքովն ի Հայաստան և որի սկզբնահունչ ղօղանջն գալիս է Իրենից, Իր բառերից. «Ես յաղթեցի աշխարհի»:

Ահա այս սրբաշունչ և հոգեբարբառ Մայր Աթոռից ողջունում եմ մեր համայն հայ ժողովրդին ի Մայր Հայրենիք և ի չորս ծագս աշխարհի: Լսեցէ՛ք զաւակունք Ս. Լուսաւորչի, լսեցէ՛ք Յարութեան ձայնը ձեր հոգևոր մայր տնից՝ Ս. Էջմիածնից: Նոր շունչ է ծաւալուել ձեր վերանկախացեալ հայրենիքում: Այդ շնչով կենսաւորուեցէք և նորոգուեցէք: Ծարականագիր վարդապետին ձայնակցենք.

«Այսօր գերազուարճ հոգով
Պայծառանանք այս տօնի շնորհիւ

Աստծու առաջ հաշտ սրտով
Միմեանց ողջագուրենք և
Միաձայն բարբառով գոչենք

Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

«Շնո՛րհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ. Ամէն»: